ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

«Կերպարվեստ», Երաժշտություն», Ֆիզկուլտուրա», Առողջ ապրելակերպ և անվտանգ կեսագործունեություն» առարկաների առարկայական մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի հոկտեմբերի 27-ին: Նիստին մասնակցել են մասնախմբի բոլոր 14 անդամները:
Մասնակցողների անուն, ազգանուն

1. Մարգարիտա Հակոբջանյան
2. Լուսինե Հովիաննիսյան
3. Հայարփի Մինասյան
4. Արևիկ Խաչատրյան
5. Տատյանա Սարգսյան
6. Հասմիկ Հակոբյան
7. Հասմիկ Ավանեսյան
8. Սոնա Պողոսյան
9. Քնարիկ Խաչատրյան
10. Սուսաննա Գորգինյան
11. Արմինե Նիկողոսյան
12. Ալմաստ Մելքոնյան
13. Լուսինե Խաչատրյան
14. Նորա Վարդերեսյան

Օրակարգում՝

1. Մեթոդական միավորման նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Մ. Հակոբջանյան)
2. Նախորդ մեթոդմիավորման նիստի որոշումների կատարման մասին քննարկում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Մ. Հակոբջանյան)
3. Ֆիզկուլտուրա առարկայի դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրության նպատակով իրականացված դասալսումների արդյունքների քննարկում և ամփոփում:
4. Նոյեմբեր ամսվա ընթացքում «Ֆիզկուլտուրա» և «Կերպարվեստ» առարկաներից դասալսումների կազմակերպում և իրականացման ժամանակացույցի ներկայացում:
5. Նոյեմբեր ամսվա համար նախատեսված միջոցառումների նախապատրաստական աշխատանքների կազմակերպում և պատասխանատուների սահմանում:
6. 1-4-րդ դասարաններում «Հասկանա իր առջև դրված խնդիրը, մշակի և կատարի քայլեր՝ այն լուծելու համար» և 5-9-րդ դասարաններում «Որոշի խնդրի լուծման համար անհրաժեշտ տեղեկույթը, գտնի խնդիրների լուծման ստեղծագործ մոտեցումներ և համեմատի դրանք» վերջնարդյունքների գնահատման կազմակերպում և արդյունքների վերլուծություն:

ԼՍԵՑԻՆ 1

Մեթոդական միավորման ղեկավար Մ. Հակոբջանյանը ներկայացրեց 2026 թվականի հոկտեմբերի 27-ին նախատեսված մեթոդական միավորման նիստի օրակարգի նախագիծը՝ ներառված յոթ հարցերով, զեկուցողներով և քննարկման հիմնական ուղղություններով:

Նշվեց, որ օրակարգը կազմվել է՝ հիմք ընդունելով մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլանը, ուսումնական գործընթացի կազմակերպման առաջնահերթությունները, նախորդ նիստերի որոշումները և ընթացիկ ուսումնական խնդիրները:

ԼՍԵՑԻՆ 2

Մեթոդական միավորման ղեկավար Մ. Հակոբջանյանը ներկայացրեց նախորդ՝ 2026 թվականի սեպտեմբերի 29-ի նիստում կայացված որոշումների կատարման ընթացքը՝ անդրադառնալով նախատեսված աշխատանքների իրականացմանը և արձանագրված արդյունքներին:

Անդրադառնալով թեմատիկ պլանների և էլեկտրոնային մատյանների վարման գործընթացին՝ ՄՄ ղեկավարը նշեց, որ նախորդ նիստի որոշմամբ սահմանված ժամկետում՝ մինչև 2026 թվականի հոկտեմբերի 10-ը, մեթոդական միավորման անդամ բոլոր ուսուցիչներն իրենց առարկայական թեմատիկ պլանները մուտքագրել են ԴԿՏՀ համակարգ: Միաժամանակ ապահովվել է բոլոր ուսուցիչների հասանելիությունն իրենց էլեկտրոնային մատյաններին: Սահմանված ժամկետներում իրականացվել են սովորողների հաճախումների հաշվառման, դասերի գրանցման, ընթացիկ և ամփոփիչ գնահատման աշխատանքները՝ համապատասխան պահանջներին համաձայն:

Անդրադարձ կատարվեց սովորողների անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ) իրականացմանը: Նշվեց, որ ուսումնական գործընթացը կազմակերպվում է՝ հաշվի առնելով սովորողների անհատական կրթական կարիքները, կարողություններն ու ուսուցման առանձնահատկությունները: Իրականացվել է սովորողների առաջընթացի պարբերական դիտարկում, արձանագրվել են նրանց ձեռքբերումները և ԱՈՒՊ-ներով սահմանված նպատակների իրականացման արդյունքները:

Ֆիզկուլտուրա առարկայի դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրության նպատակով հոկտեմբերի 12-ին իրականացվել է Քնարիկ Խաչատրյանի դասի դիտարկումը՝ 2-րդ Գ դասարանում, հոկտեմբերի 13-ին՝ Սոնա Պողոսյանի դասի դիտարկումը՝ 2-րդ Ա դասարանում, իսկ հոկտեմբերի 14-ին՝ Հասմիկ Ավանեսյանի դասի դիտարկումը՝ 1-ին Բ դասարանում: Դասալսումների արդյունքներով արձանագրվել է, որ ուսուցիչները դասերը կազմակերպել են թեմաներին համապատասխան՝ կիրառելով գործնական վարժություններ, ցուցադրման և խաղային մեթոդներ, ապահովելով սովորողների մասնակցությունը՝ ըստ նրանց անհատական կարողությունների: Դասերի ընթացքում ձևավորվել է դրական հոգեբանական միջավայր: Միաժամանակ առաջարկվել է առավել ուշադրություն դարձնել համագործակցային առաջադրանքների, շարժախաղերի, տարբերակված մոտեցումների և սովորողների ինքնուրույնության զարգացմանը:

Անդրադառնալով նախատեսված աշխատանքների ընթացքին՝ ՄՄ ղեկավարը նշեց, որ Երևանում COP17 միջոցառումների անցկացման հետ կապված՝ հոկտեմբերի 15-ին, 16-ին և 17-ին ուսումնական գործընթացը կազմակերպվել է նաև հեռավար ձևաչափով, թեև դա նախապես նախատեսված չի եղել: Այս հանգամանքով պայմանավորված՝ սկսնակ ուսուցիչներ Արևիկ Խաչատրյանի և Նորա Վարդերեսյանի դասալսումները չեն իրականացվել նախատեսված ժամկետներում և տեղափոխվել են նոյեմբեր ամիս: Դասալսումների նոր ժամկետներն ընդգրկվել են նոյեմբեր ամսվա ժամանակացույցում:

Նույն հանգամանքով պայմանավորված՝ «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացումը հետաձգվել է և նախատեսվել նոյեմբեր ամսվա առաջին շաբաթվա ընթացքում:

Նախորդ նիստում ընդունված որոշման համաձայն՝ Մ. Հակոբջանյանը ՄՄ անդամների համար իրականացրել է «Ուսումնական առարկաների դասավանդման և սովորողների ուսումնառության որակի բարելավում» թեմայով դասընթաց՝ նպատակ ունենալով կատարելագործել նրանց մասնագիտական կարողությունները, զարգացնել դասավանդման արդյունավետ մեթոդների կիրառման հմտությունները և նպաստել սովորողների ուսումնառության որակի բարելավմանը:

ՄՄ ղեկավարը տեղեկացրեց նաև, որ տնօրինության կողմից նախատեսվում է իրականացնել մեթոդական միավորման ղեկավարների կազմակերպած դասընթացների արդյունավետության մշտադիտարկում և գնահատում: Այդ նպատակով մշակվել է էլեկտրոնային հարցաշար, որն առաջիկայում ուղարկվելու է ՄՄ անդամներին՝ լրացման համար: Հարցաշարի արդյունքները հիմք կհանդիսանան դասընթացների արդյունավետության գնահատման և հետագա մեթոդական աշխատանքների բարելավման համար:

ԼՍԵՑԻՆ 3

Մեթոդական միավորման ղեկավար Մ. Հակոբջանյանը ներկայացրեց «Ֆիզկուլտուրա» առարկայի դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրության, սկսնակ ուսոցիչներին մեթոդական աջակցության նպատակով 2026 թվականի հոկտեմբերի 12-ին, 13-ին և 14-ին տարրական օղակում իրականացված երեք դասալսումների արդյունքները:

Դասալսումներն իրականացվել են 2-րդ Գ դասարանում՝ Քնարիկ Խաչատրյանի, 2-րդ Ա դասարանում՝ Սոնա Պողոսյանի, և 1-ին Բ դասարանում՝ սկսնակ ուսուցիչ Հասմիկ Ավանեսյանի մոտ:

Դիտարկումների արդյունքում արձանագրվել է, որ ուսուցիչների դասերի պլանները համապատասխանել են ներկայացված պահանջներին, դասերի ընթացքում ապահովվել է սովորողների մասնակցությունը՝ հաշվի առնելով նրանց անհատական հնարավորությունները: Ուսուցիչները կիրառել են թեմաներին համապատասխան գործնական վարժություններ, ցուցադրումներ, մարզական և տեսողական նյութեր: Դասերի ընթացքում ապահովվել է դրական հուզական միջավայր, կիրառվել են խրախուսման և հետադարձ կապի տարբեր ձևեր:

Քնարիկ Խաչատրյանի դասին բոլոր սովորողները ներգրավված են եղել ուսումնական գործողություններում: Շարժումների ցուցադրմամբ և առաջադրանքներով խթանվել է նրանց հետաքրքրությունը: Միաժամանակ առաջարկվել է ավելի հաճախ կիրառել համատեղ կատարվող վարժություններ և շարժումային խաղեր՝ սովորողների համագործակցությունը զարգացնելու նպատակով:

Սոնա Պողոսյանի դասին ապահովվել է բոլոր սովորողների մասնակցությունը: Նոր նյութը ներկայացվել է մատչելի ցուցադրմամբ և բացատրությամբ: Դիտարկումների արդյունքում առաջարկվել է առավել հստակ ապահովել կապը նախորդ նյութի հետ, համալրել կիրառվող մարզական պարագաները, ինչպես նաև բազմազանեցնել գնահատման և խրախուսման ձևերը՝ հաշվի առնելով սովորողների անհատական առաջընթացը:

Սկսնակ ուսուցիչ Հասմիկ Ավանեսյանի դասը կազմակերպվել է նպատակային և հետաքրքիր ձևով: Դասի ընթացքում կիրառվել են խաղային առաջադրանքներ, դիդակտիկ և տեսողական նյութեր, որոնք նպաստել են սովորողների հետաքրքրության և ակտիվ մասնակցության խթանմանը: Խրախուսման միջոցով ապահովվել է դրական տրամադրվածություն: Առաջարկվել է շարունակել կիրառել խաղային և տեսողական մեթոդները՝ աստիճանաբար ընդլայնելով սովորողների ինքնուրույն կատարվող առաջադրանքների շրջանակը:

Ընդհանուր առմամբ, դասալսումների արդյունքներով արձանագրվել է, որ դասերը կազմակերպվել են թեմաներին համապատասխան, ապահովվել են սովորողների մասնակցությունն ու դրական հուզական միջավայրը: Միաժամանակ կարևորվել է համագործակցային առաջադրանքների, շարժումային խաղերի, տարբերակված մոտեցումների և խրախուսման ձևերի հետագա զարգացումը:

ՄՄ ղեկավարը կարևորեց դասալսումների արդյունքների հիման վրա ուսուցիչներին շարունակական մեթոդական աջակցության տրամադրումը և հաջողված փորձի տարածումը:

ԼՍԵՑԻՆ 4

Մեթոդական միավորման ղեկավար Մ. Հակոբջանյանը ներկայացրեց նոյեմբեր ամսվա ընթացքում «Ֆիզկուլտուրա» և «Կերպարվեստ» առարկաներից դասալսումների կազմակերպման հարցը: Նշվեց, որ դասալսումների նպատակն է ուսումնասիրել առարկաների դասավանդման և ուսումնառության որակը, դիտարկել դասերի պլանավորման և իրականացման արդյունավետությունը, սովորողների մասնակցությունն ու ներգրավվածությունը, ինչպես նաև բացահայտել ուսումնական գործընթացի բարելավման հնարավորությունները:

Մեթոդական միավորման ղեկավար Մ. Հակոբջանյանը ներկայացրեց նոյեմբեր ամսվա դասալսումների ժամանակացույցը.

N	Ուսուցչի անուն, ազգանուն	Ամսաթիվ	Առարկա	Դասարան	Դասաժամ
1.	Արևիկ Խաչատրյան	02.11.2026	Կերպարվեստ	4-րդ Բ	V
2.	Նորա Վարդերեսյան	03.11.2026	Ֆիզկուլտուրա	7-րդ Ա	III
3.	Հասմիկ Հակոբյան	05.11.2026	Ֆիզկուլտուրա	3-րդ Դ	IV
4.	Ալմաստ Մելքոնյան	06.11.2026	Ֆիզկուլտուրա	4-րդ Բ	IV
5.	Լուսինե Խաչատրյան	09.11.2026	Ֆիզկուլտուրա	4-րդ Գ	IV
6.	Արմինե Նիկողոսյան	13.11.2026	Ֆիզկուլտուրա	4-րդ Ա	II
7.	Սուսան Գորգինյան	16.11.2026	Ֆիզկուլտուրա	3-րդ Ա	II

ԼՍԵՑԻՆ 5

Մեթոդական միավորման ղեկավար Մ. Հակոբջանյանը ներկայացրեց նոյեմբեր ամսվա համար նախատեսված միջոցառումների նախապատրաստական աշխատանքների կազմակերպման հարցը: Անդրադարձ կատարվեց Իրավունքների իրազեկման օրվան նվիրված պաստառների պատրաստման աշխատանքներին, անհրաժեշտ նյութերի նախապատրաստմանը և սովորողների ներգրավմանը՝ նրանց անհատական հնարավորություններին համապատասխան:

ԼՍԵՑԻՆ 6

ՄՄ ղեկավարը ներկայացրեց 1-9-րդ դասարաններում ընտրված վերջնարդյունքի գնահատման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքները: Նշվեց, որ սովորողների տվյալ կարողության ձևավորման մակարդակը, ձեռքբերումներն ու առաջընթացը դիտարկելու նպատակով մշակվել է էլեկտրոնային հարցաթերթ:

ՄՄ անդամներին ներկայացվեցին հարցաթերթի կիրառման և լրացման հիմնական մոտեցումները: Ընդգծվեց, որ առարկայական ուսուցիչները յուրաքանչյուր սովորողի գնահատումը պետք է իրականացնեն տարբեր իրավիճակներում և առաջադրանքների ընթացքում կատարած դիտարկումների հիման վրա՝ արտացոլելով կարողության դրսևորման փաստացի մակարդակը:

Առանձին ուշադրություն դարձվեց սովորողների հաղորդակցման և շարժողական առանձնահատկությունների հաշվառմանը: Նշվեց, որ կարողության դրսևորում պետք է դիտարկել ոչ միայն խոսքային պատասխանը, այլև հայացքով, ժեստով, առարկայի կամ նկարի ընտրությամբ, ինչպես նաև այլընտրանքային հաղորդակցման միջոցներով արտահայտված արձագանքը:

Նշվեց, որ հարցաթերթերի տվյալները կամփոփվեն ՄՄ ղեկավարի կողմից և կքննարկվեն տնօրենի հետ՝ սովորողների ձեռքբերումներն ու առաջընթացը գնահատելու նպատակով: Ամփոփ արդյունքները կներկայացվեն մանկավարժական խորհրդին, իսկ անհրաժեշտության դեպքում հետագա անելիքները կքննարկվեն ՄՄ նիստում:

Լսելով 2026 թվականի հոկտեմբերի 27-ի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ զեկուցումները և քննարկելով ներկայացված հարցերը՝ մեթոդական միավորումը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել մեթոդական միավորման նիստի օրակարգը՝ ներկայացված 5 հարցերով և նախատեսված քննարկման ուղղություններով:
2. Նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն՝ արձանագրելով, որ՝
   2.1. «Ուսումնական առարկաների դասավանդման և սովորողների ուսումնառության որակի բարելավում» թեմայով նախատեսված դասընթացն իրականացվել է՝ ապահովելով նախատեսված բովանդակության ներկայացումն ու քննարկումը:
   2.2. ՄՄ անդամներին պատշաճ մասնակցություն ապահովել տնօրինության կողմից նախատեսված՝ դասընթացի արդյունավետության գնահատման գործընթացին՝ լրացնելով համապատասխան էլեկտրոնային հարցաշարը:
   2.3. COP17 միջոցառումներով պայմանավորված՝ նախատեսված ժամկետներում չեն իրականացվել սկսնակ ուսուցիչներ Արևիկ Խաչատրյանի և Նորա Վարդերեսյանի դասալսումները, ինչպես նաև հետաձգվել է «Սպորտլանդիա» մարզական միջոցառումը:
   2.4. Արևիկ Խաչատրյանի և Նորա Վարդերեսյանի դասալսումներն իրականացնել նոյեմբեր ամսվա հաստատված ժամանակացույցի համաձայն, իսկ «Սպորտլանդիա» մարզական միջոցառումն անցկացնել նոյեմբերի առաջին շաբաթվա ընթացքում:
3. Դասալսումների ընթացքում արձանագրված դրական փորձը և ներկայացված առաջարկություններն օգտագործել դասավանդման որակի բարելավման, համագործակցային առաջադրանքների, շարժումային խաղերի, տարբերակված մոտեցումների կիրառման և ուսուցիչներին շարունակական մեթոդական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

4. Հավանության արժանացնել ՄՄ ղեկավարի կողմից ներկայացված նոյեմբեր ամսվա դասալսումների ժամանակացույցը: «Ֆիզկուլտուրա» և «Կերպարվեստ» առարկաներից դասալսումներն իրականացնել հաստատված ժամանակացույցի համաձայն, իսկ արդյունքներն ամփոփել և քննարկել ՄՄ նիստում՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելով ուսումնական գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկություններ:
5. Կազմակերպել Իրավունքների իրազեկման օրվան նվիրված միջոցառումները և պաստառների պատրաստման աշխատանքները՝ ապահովելով սովորողների մասնակցությունը՝ նրանց անհատական կարողություններին ու հնարավորություններին համապատասխան: Յուրաքանչյուր դասարանում աշխատանքների կազմակերպման և իրականացման պատասխանատվությունը վերապահել ՄՄ անդամ հանդիսացող՝ տվյալ դասարանի դասղեկին:
6. 1-4-րդ դասարաններում «Հասկանա իր առջև դրված խնդիրը, մշակի և կատարի քայլեր՝ այն լուծելու համար» և 5-9-րդ դասարաններում «Որոշի խնդրի լուծման համար անհրաժեշտ տեղեկույթը, գտնի խնդիրների լուծման ստեղծագործ մոտեցումներ և համեմատի դրանք» վերջնարդյունքի գնահատման նպատակով՝
   6.1. ՄՄ անդամ ուսուցիչներին հանձնարարել երկօրյա ժամկետում լրացնել էլեկտրոնային հարցաթերթը՝ յուրաքանչյուր սովորողի կարողության դրսևորման փաստացի մակարդակը գնահատելով տարբեր օրերի և առաջադրանքների ընթացքում իրականացված դիտարկումների հիման վրա և հաշվի առնելով նրա հաղորդակցման ու շարժողական առանձնահատկությունները:
   6.2. Հարցաթերթերի լրացումից հետո ՄՄ ղեկավարին հանձնարարել ամփոփել ստացված տվյալները և իրականացնել նախնական վերլուծություն՝ ըստ դասարանների և ուսումնական առարկաների՝ առանձնացնելով սովորողների ձեռքբերումները, առաջընթացը և լրացուցիչ ուշադրություն պահանջող ուղղությունները:
   6.3. Նախնական վերլուծության արդյունքները ներկայացնել տնօրենի հետ ընդլայնված խորհրդակցության ընթացքում՝ տվյալների համադրման և հետագա աշխատանքների ուղղությունների հստակեցման նպատակով:
   6.4. Խորհրդակցության արդյունքների հիման վրա վերջնականացնել վերլուծությունը, ներկայացնել ՄՄ առաջիկա նիստում և ձևավորված առաջարկությունների հետ միասին ներկայացնել մանկավարժական խորհրդի քննարկմանը:

Արվեստ և արհեստ, Ֆիզիկական կրթություն և առողջ, անվտանգ կենսագործունեություն առարկաների առարկայական մասնախմբի ղեկավար՝ _____ **Մ. Հակոբջանյան**

Քարտուղար՝ _____ **Լ. Հովհաննիսյան**

28.10.2026